ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 5

ԴԴՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղական համայնքի ավագանու քննարկմանը դրվեց համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-030-0212-0061 ծածկագրի 0.02737 հա, 05-030-0217-0053 ծածկագրի 0.01122 հա, 05-030-0202-0097 ծածկագրի 0.02143 հա, 05-030-0212-0069 ծածկագրի 0.009 հա, 05-030-0202-0064 ծածկագրի 0.05241 հա, 05-030-0294 ծածկագրի 2 միավոր 0.01554 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողերը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու հարցը:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> կողմից տրված 20.12.2016թ. N108 եզրակացությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-030-0212-0061 ծածկագրի 0.02737 հա, 05-030-0217-0053 ծածկագրի 0.01122 հա, 05-030-0202-0097 ծածկագրի 0.02143 հա, 05-030-0212-0069 ծածկագրի 0.009 հա, 05-030-0202-0064 ծածկագրի 0.05241 հա, 05-030-0294 ծածկագրի 2 միավոր 0.01554 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա /կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության/՝ կապտաժների սպասարկման համար:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Թադևոսյան Գառնիկ

2. Կիրակոսյան Հրահատ

3. Հովհաննիսյան Գուրգեն

4. Ղարիբյան Էդիկ

5. Մելքոնյան Զավեն

6. Սարգսյան Ժաննա

Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան